

ԵԱՀԽ Մարդկային ուղղությանը նվիրված համաժողովի՝ Կոպենհագենի հանդիպման փաստաթուղթը

Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի (ԵԱՀԽ) Մասնակից պետությունների՝ Ավստրիայի, Բելգիայի, Բուլղարիայի, Կանադայի, Կիպրոսի, Շեխտլավակիայի, Դանիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի ժողովրդավարական Հանրապետության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Հունաստանի, Վատիկանի, Հունգարիայի, Իսլանդիայի, Իտալիայի, Լիխտենշտեյնի, Լյուքսեմբուրգի, Մալթայի, Մոնակոյի, Նիդերլանդների, Նորվեգիայի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Սան Մարինոյի, Իսպանիայի, Շվեյչարիայի, Շվեյցարիայի, Թուրքիայի, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության, Միացյալ Թագավորության, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հարավսլավիայի ներկայացուցիչները հանդիպեցին Կոպենհագենում 1990 թվականի հունիսի 5-ից 29-ը՝ ԵԱՀԽ Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթորում պարունակվող՝ ԵԱՀԽ Մարդկային ուղղությանը վերաբերող դրույթներին համապատասխան:

Ալբանիայի ներկայացուցիչը մասնակցել է Կոպենհագենի հանդիպմանը որպես դիտորդ:

Խորհրդաժողովի առաջին հանդիպումը կայացել է Փարիզում 1989 թվականի մայիսի 30-ից հունիսի 23-ը:

Կոպենհագենի հանդիպման բացումն ու փակումը վերապահվել է Դանիայի արտաքին գործերի նախարարին:

Կոպենհագենի հանդիպման բացման պաշտոնական արարողությանը ներկա էին Դանիայի Նորին Գերազանցություն Թագուհին և Նորին Արքայական Սեծություն Արքայազն Կոնսորտը:

Քացման ելույթով հանդես եկան Մասնակից պետությունների նախարարներ և փոխնախարարներ:

Դանիայի արտաքին գործերի նախարարի իրավերով 1990 թվականի հունիսի 5-ին գումարված ԵԱՀԽ Մասնակից պետությունների արտաքին գործերի նախարարների հատուկ հանդիպման ընթացքում համաձայնություն էր ձեռք բերվել 1990 թվականի հուլիսի 10-ին Վիեննայում Նախապատրաստական կոմիտեի նիստ գումարելու մասին՝ Փարիզում պետությունների կամ կառավարությունների դեկանարների գագաթնաժողով նախապատրաստելու նպատակով:

Մասնակից պետությունները մեծ գոկունակությամբ ողջունում են ԵԱՀԽ Մարդկային ուղղությանը նվիրված խորհրդաժողովի՝ 1989 թվականին Փարիզում կայացած առաջին հանդիպումից հետո Եվրոպայում տեղի ունեցած հիմնարար քաղաքական փոփոխությունները: Նրանք նշում են, որ ԵԱՀԽ գործընթացն զգալիորեն նպաստել է այդ փոփոխությունների իրականացմանը, և որ այդ զարգացումները, իրենց հերթին, մեծապես նպաստել են Եզրափակիչ ակտի և ԵԱՀԽ մյուս փաստաթորերի դրույթների կիրարկմանը:

Նրանք գիտակցում են, որ քաղմակարձիք ժողովրդավարությունը և իրավունքի գերակայությունն էական են մարդու բոլոր իրավունքների և իմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ապահովման, մարդկային շփոմների զարգացման և մարդասիրական բնույթի այլ՝ նմանատիպ խնդիրների լուծման համար: Այդ պատճառով նրանք ողջունում են բոլոր Մասնակից պետությունների կողմից արտահայտված նվիրվածությունը ժողովրդավարական իդեալներին և քաղաքական քաղմակարծությանը, ինչպես նաև ազատ ընտրությունների և իրավունքի գերակայության վրա իմնված ժողովրդավարական հասարակություններ ձևավորելու հարցում նրանց ընդհանուր վճռականությունը:

Կոպենհագենի հանդիպման ընթացքում Մասնակից պետությունները վերանայեցին մարդկային ուղղության բնագավառում իրենց հանձնառությունների կատարման հարցը:

Նրանք եկան այն եզրահանգմանը, որ իրենց կողմից ԵԱՀԽ փաստաթղթերի համապատասխան դրույթներով ամրագրված հանձնառությունների կատարման մակարդակը Փարիզի հանդիպումից հետո զգալիորեն բարելավվել է: Այդուհանդերձ, նրանք այն տեսակետն արտահայտեցին, որ մարդկային ուղղության ոլորտում իրենց հանձնառությունների լիարժեք կատարման համար լրացուցիչ քայլեր են պահանջվում:

Մասնակից պետություններն իրենց համոզմունքն են հայտնում առ այն, որ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ լիարժեք հարգանքը և բազմակարծիք ժողովրդավարության ու իրավունքի գերակայության վրա հիմնված հասարակությունների զարգացումը Եվրոպայում խաղաղության, անվտանգության, արդարության և համագործակցության երկարատև կարգի հաստատման առաջընթացի նախապայմաններն են: Հետևաբար, նրանք վերահաստատում են իրենց հանձնառությունը՝ լիարժեք կերպով կիրարկել Եզրափակիչ ակտի և մարդկային ուղղությանը վերաբերող ԵԱՀԽ մյուս փաստաթղթերի դրույթները և պարտավորվում են չբավարարվել ձեռք բերված առաջընթացով:

Նրանք գիտակցում են, որ փոխադարձ համագործակցությունը, ինչպես նաև տարրեր անձանց, խմբերի, կազմակերպությունների և հաստատությունների ներգրավումն էական են լինելու իրենց ընդհանուր նպատակների ուղղությամբ շարունակական առաջընթաց ապահովելու համար:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը և դրանց իրականացումն ապահովելու, մարդկային շփոմները զարգացնելու և մարդասիրական բնույթի այլ նմանադիպ հացեր լուծելու նպատակով Մասնակից պետությունները համաձայնում են հետևյալ շուրջ.

I

1) Մասնակից պետություններն իրենց համոզմունքն են հայտնում, որ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն ու դրանց նպատելը կառավարության հիմնական նպատակներից մեկն է, և վերահաստատում են, որ այդ իրավունքների և ազատությունների ճանաչումն ազատության, արդարության և խաղաղության հիմքն է:

2) Նրանք լի են վճռականությամբ՝ պաշտպանել և առաջ մղել արդարադատության այն սկզբունքները, որոնք իրավական պետության հիմքն են կազմում: Նրանք գտնում են, որ իրավական պետությունը զուտ ֆորմալ օրինականություն չէ, որն ապահովում է ժողովրդավարական կարգի կանոնավոր և հետևողական կայացումը և կատարումը, այլ՝ մարդկային անհատականության գերազույն արժեքի ճանաչման և լիարժեք ընդունման վրա հիմնված և այն հաստատությունների կողմից երաշխավորված արդարություն, որոնք դրա լիարժեք արտահայտման համար դաշտ են ապահովում:

3) Նրանք վերահաստատում են, որ ժողովրդավարությունն իրավական պետության անբաժանելի բաղադրիչն է: Նրանք ճանաչում են քաղաքական կազմակերպությունների առնչությամբ բազմակարծության կարևորությունը:

4) Նրանք հաստատում են, որ հարգելու են մեկմեկու՝ մարդու իրավունքների ոլորտի միջազգային շափանիշներին համապատասխան իրենց քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային համակարգերն ազատորեն ընտրելու և զարգացնելու իրավունքը: Այդ իրավունքն իրականացնելիս նրանք ապահովելու են իրենց օրենքների, կանոնակարգերի, գործելակերպի և քաղաքականության համապատասխանությունը միջազգային իրավունքով ստանձնած իրենց պարտավորություններին և դրանց ներդաշնակեցումը Սկզբունքների մասին հոչակագրին և ԵԱՀԽ մյուս հանձնառություններին:

5) Նրանք հանդիսավոր կերպով հայտարարում են, որ բոլոր մարդկային էակներին ներհատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների լիարժեք արտահայտման համար էական համարվող արդարության քաղադրիշներից են.

5.1) – ազատ ընտրությունները, որոնք անցկացվելու են ողջամիտ պարբերականությամբ՝ գաղտնի քվեարկությամբ կամ քվեարկության այլ համարժեք ընթացակարգով, այնպիսի պայմաններում, որոնք գործնականում կապահովեն ընտրողների կարծիքի ազատ արտահայտումն իրենց ներկայացուցիչներին ընտրելու հարցում.

5.2) – կառավարման այնպիսի ձևը, որը բնույթով ներկայացուցչական է, և որտեղ գործադիրը հաշվետու է ընտրովի օրենսդրին կամ ընտրազանգվածին.

5.3) – կառավարության և պետական իշխանությունների՝ սահմանադրությանը համապատասխան և օրենքին համահունչ գործելու պարտականությունը.

5.4) – պետության և քաղաքական կուսակցությունների միջև հստակ տարանջատումը. մասնավորապես, քաղաքական կուսակցությունները չպետք է ձուլվեն պետությանը.

5.5) – կառավարության, վարչակազմի և դատական մարմինների գործունեությունն իրականացվելու է օրենքով սահմանված համակարգին համապատասխան: Պետք է ապահովել հարգանք այդ համակարգի նկատմամբ.

5.6) – զինված ուժերը և ոստիկանությունը գտնվելու են քաղաքացիական իշխանությունների հսկողության ներքո և հաշվետու են լինելու վերջիններին.

5.7) – մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները երաշխավորվելու են օրենքով և միջազգային իրավունքով ստանձնած իրենց պարտավորություններին համապատասխան.

5.8) – հրապարակային ընթացակարգի արդյունքում ընդունված օրենսդրությունը և կանոնակարգերը հրապարակվելու են, ինչը դրանց կիրառության նախապայմանն է լինելու: Այդ տեքստերը հասանելի են լինելու բոլորին.

5.9) – բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև և իրավունք ունեն, առանց որևէ խտրականության, օգտվելու օրենքի հավասար պաշտպանությունից: Այդ առումով օրենքով արգելվելու է խտրականության որևէ դրսւորում, և բոլոր մարդկանց համար երաշխավորվելու է հավասար և արդյունավետ պաշտպանություն որևէ հիմքով խտրականությունից.

5.10) – յուրաքանչյուր ոք ունենալու է իրավական պաշտպանության արդյունավետ միջոց վարչական որոշումների դեմ, որպեսզի երաշխավորվի հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ և ապահովի իրավական համակարգին վճար չհասցնելը.

5.11) – անձի դեմ կայացված վարչական որոշումները պետք է պատշաճ կերպով հիմնավորված լինեն և, որպես կանոն, մատնանշեն առկա իրավական պաշտպանության միջոցները.

5.12) – ապահովվելու է դատավորների անկախությունը և պետական դատական ծառայության անաշառ գործունեությունը.

5.13) – ճանաչվելու և պաշտպանվելու է փաստաբանների անկախությունը, մասնավորապես՝ նրանց աշխատանքի ընդունման և պրակտիկ գործունեության ոլորտում.

5.14) – քրեական դատավարությանը վերաբերող կանոնները պարունակելու են քրեական հետապնդման մասով լիազորությունների, ինչպես նաև քրեական հետապնդմանը նախորդող կամ ուղեկցող միջոցների հստակ սահմանում.

5.15) – քրեական մեղադրանքով ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձ իրավունք է ունենալու, իր ձերբակալության կամ կալանավորման օրինականությունը որոշելու նպատակով, կանգնել դատավորի կամ այդախի գործառույթ կատարելու համար լիազորված մեկ այլ պաշտոնատար անձի առջև.

5.16) – իրեն ներկայացված որևէ քրեական մեղադրանքի կամ օրենքով սահմանված վարույթում իր իրավունքների և պարտականությունների որոշման ժամանակ յուրաքանչյուր ոք ունենալու է արդար և իրապարակային դատարնության իրավունք օրենքով ստեղծված՝ իրավասու, անկախ և անաշառ դատարանի կողմից.

5.17) – քրեական հետապնդման ենթարկված յուրաքանչյուր անձ իրավունք է ունենալու պաշտպանելու իրեն անձամբ, կամ իր կողմից ընտրված և անհապաղ տրամադրված իրավաբանական օգնության միջոցով կամ, այն դեպքում, եթե անձը չունի բավարար միջոցներ իրավաբանական օգնության դիմաց վճարելու համար՝ անվճար իրավաբանական օգնության միջոցով, եթե դա են պահանջում արդարադատության շահերը.

5.18) – ոչ ոք չի մեղադրվելու, դատվելու կամ դատապարտվելու հանցագործության համար, եթե հանցագործությունը սահմանված չէ օրենքով, որը հստակ և ճշգրիտ կերպով ամրագրում է այդ հանցագործության հատկանիշները.

5.19) – յուրաքանչյուր ոք համարվելու է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքին համապատասխան.

5.20) – հաշվի առնելով մարդու իրավունքների ոլորտի միջազգային փաստաթղթերի կարևոր ներդրումն ազգային մակարդակում իրավունքի գերակայության հաստատման գործում՝ Մասնակից պետությունները վերահստատում են, որ միանալու են «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրին, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրին և համապատասխան մյուս միջազգային փաստաթղթերին, եթե դեռևս չեն նշացել դրանց.

5.21) – իրավական պաշտպանության ներպետական միջոցները լրացնելու և Մասնակից պետությունների ստանձնած միջազգային պարտավորությունների պահպանումն ապահովելու նպատակով Մասնակից պետությունները քննարկելու են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի՝ տարածաշրջանային կամ գլոբալ միջազգային կոնվենցիաներին, այդ թվում՝ «Մարդու իրավունքների եվրոպական» կոնվենցիային կամ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությանը միանալու հարցը, որոնք նախատեսում են միջազգային մարմիններ անհատական գանգատներ ներկայացնելու ընթացակարգեր:

6) Մասնակից պետությունները հայտարարում են, որ պարբերական և իրական ընտրությունների միջոցով ազատ և արդար ձևով արտահայտված ժողովրդի կամքը բոլոր կառավարությունների իրավասության և լեզվահմտության հիմքն է: Մասնակից պետություններն, ըստ այդմ, հարգելու են պետության կառավարմանը մասնակցելու իրենց քաղաքացիների իրավունքը՝ ուղղակիորեն կամ արդարացի ընտրական գործընթացների միջոցով ազատորեն ընտրված ներկայացնելու միջոցով: Նրանք ճանաչում են իրենց օրենքներին, մարդու իրավունքների ոլորտի իրենց պարտավորություններին և միջազգային հանձնառություններին համապատասխան, ժողովրդի կամքով ազատորեն հաստատված ժողովրդավարական կարգն այն անձանց, խմբերի կամ կազմակերպությունների գործողություններից պաշտպանելու իրենց պարտականությունը, որոնք ներգրավված են ահարեկչության կամ բռնության մեջ կամ իրաժարվում են մերժել ահարեկչությունը կամ բռնությունը, որի նպատակն այդ կարգը կամ մեկ այլ Մասնակից պետության կարգը տապալելն է:

7) Ժողովրդի կամքը որպես կառավարության իշխանության հիմք ապահովելու նպատակով Մասնակից պետությունները.

7.1) – օրենքով սահմանված կարգով, ողջամիտ պարբերականությամբ անցկացնելու են ազատ ընտրություններ,

7.2) – քոյլ են տալու, որ ազգային օրենսդիր մարմնի առնվազն մեկ պալատի տեղերն զբանացվեն ժողովրդական քվեարկության արդյունքում, մրցակցային հիմունքներով,

7.3) – երաշխավորելու են համընդհանուր և հավասար ձայնի իրավունք բոլոր չափահաս քաղաքացիների համար,

7.4) – ապահովելու են, որ քվեարկությունն անցկացվի գաղտնի կամ այլ համարժեք ազատ քվեարկության ընթացակարգով, և որ ձայները հաշվարկվեն, և դրանց վերաբերյալ տեղեկությունները հայտարարվեն ազնիվ կերպով, և որ պաշտոնական արդյունքները հրապարակային դարձվեն,

7.5) – հարգելու են քաղաքացիների՝ քաղաքական կամ պետական պաշտոն զբաղեցնելու իրավունքը՝ առանց որևէ խտրականության, անձամբ կամ որպես քաղաքական կուսակցությունների կամ կազմակերպությունների ներկայացուցիչներ,

7.6) – հարգելու են անձանց կամ խմբերի՝ միանգամայն ազատորեն իրենց սեփական քաղաքական կուսակցությունները կամ այլ քաղաքական կազմակերպություններ ստեղծելու իրավունքը և այդ քաղաքական կուսակցություններին և կազմակերպություններին ապահովելու են անհրաժեշտ իրավական երաշխիքներով՝ հնարավորություն ընձեռելով նրանց մրցելու մեկմեկու դեմ օրենքի առջև և իշխանությունների կողմից հավասար վերաբերմունքի պայմաններում,

7.7) – ապահովելու են, որ օրենքը կիրառվի և պետական քաղաքականությունն իրականացվի այնպես, որ հնարավորություն ստեղծվի քաղաքական քարոզություն իրականացնել արդար և ազատ մքնոլորտում, որտեղ վարչական գործողությունները, բոնությունները կամ ահաբեկումը չեն խոշընդոտի կուսակցություններին և թեկնածուներին իրենց տեսակետները և որակավորումներն ազատորեն ներկայացնել, կամ չեն արգելվ քվեարկողներին դրանց մասին տեղեկանալ և քննարկել կամ ազատորեն տալ իրենց ձայնը՝ առանց վախենալու հասուցումից,

7.8) – ապահովելու են, որ ընտրական գործընթացին մասնակցել ցանկացող բոլոր քաղաքական խմբավորումների և անհատների համար լրատվության միջոցներից անարգել օգտվելու ճանապարհին չհայտնվեն իրավական կամ վարչական խոչընդոտներ,

7.9) – ապահովելու են, որ օրենքով պահանջվող ձայներ հավաքած թեկնածուները պատշաճ կերպով ստանձնեն իրենց պաշտոնները, և որ նրանց քոյլ տրվի մնալ այդ պաշտոններում մինչև իրենց պաշտոնավարության ժամկետի ավարտը կամ օրենքով կարգավորվող եղանակով այլ կերպ լրանալը՝ խորհրդարանական և սահմանադրական ժողովրդավարական ընթացակարգերին համապատասխան:

8) Մասնակից պետությունները գտնում են, որ օտարերկրյա և տեղական դիտորդների ներկայությունը կարող է կատարելագործել ընտրական գործընթացն այն պետություններում, որտեղ անց են կացվում ընտրություններ: Նրանք, հետևաբար, իրավիրում են դիտորդներ ԵԱՀԽ մյուս Մասնակից պետություններից և այլ համապատասխան մասնավոր հաստատություններից և կազմակերպություններից, որոնք ցանկություն ունեն հետևելու իրենց ներ-

պետական ընտրական գործընթացներին՝ օրենքով թույլատրելի սահմաններում: Նրանք նաև փորձելու են ապահովել նմանատիպ մասնակցություն ազգային մակարդակից ցածր անցկացվող այլ ընտրական գործընթացներում: Այդորինակ դիտորդները պարտավորվելու են շմիջամտել ընտրական գործընթացներին:

II

9) Մասնակից պետությունները վերահաստատում են որ.

9.1) – յուրաքանչյուր ոք ունենալու է արտահայտվելու ազատության, ներառյալ՝ հաղորդակցության իրավունք: Այդ իրավունքը ներառելու է կարծիք ունենալու և տեղեկություններ ու կարծիքներ ստանալու և տարածելու իրավունք՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այդ իրավունքի իրականացումը կարող է ենթակա լինել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և համապատասխանում են միջազգային չափանիշներին: Մասնավորապես, որևէ սահմանափակում չի դրվելու որևէ տեսակի փաստարդի բազմացման միջոցների հասանելիության և օգտագործման վրա՝ պահպանելով, միևնույն ժամանակ, մտավոր սեփականության ոլորտի իրավունքները՝ ներառյալ հեղինակային իրավունքը,

9.2) – յուրաքանչյուր ոք ունենալու է խաղաղ հավաքներ և ցույցեր անցկացնելու իրավունք: Այդ իրավունքների իրականացման ցանկացած սահմանափակում ամրագրվելու է օրենքով և համապատասխանելու է միջազգային չափանիշներին,

9.3) – երաշխավորվելու է միավորվելու իրավունքը: Երաշխավորվելու է արհեստակցական միություն կազմելու և, կախված արհեստակցական միության՝ սեփական անդամությունը որշելու ընդհանուր իրավունքից, դրան միանալու իրավունքը: Այդ իրավունքները բացառում են որևէ նախնական հսկողություն: Աշխատողների համար երաշխավորվելու է միավորվելու, այդ թվում՝ գործադրությունը՝ պահպանելով այն սահմանափակումները, որոնք նախատեսված են օրենքով և համապատասխանում են միջազգային չափանիշներին,

9.4) – յուրաքանչյուր ոք ունենալու է մտքի, խոճի և կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և սեփական կրոնը կամ համոզմունքն արտահայտելու ազատությունը՝ միանձնյա կամ այլ անձանց հետ համատեղ, իրապարակավ կամ մասնավոր կարգով՝ պաշտամունքի, քարոզչության, արարողությունների և ծեսերի միջոցով: Այդ իրավունքների իրականացումը կարող է ենթակա լինել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և համապատասխանում են միջազգային չափանիշներին,

9.5) – հարգելու են յուրաքանչյուրի՝ ցանկացած, այդ թվում՝ սեփական երկրից հեռանալու և սեփական երկիր վերադառնալու իրավունքը՝ պետության միջազգային պարտավորություններին և ԵԱՀԽ առջև ստանձնած հանձնառություններին համապատասխան: Այդ իրավունքի սահմանափակումները կրելու են խիստ սահմանափակ բացառությունների բնույթը. դրանք համարվելու են անհրաժեշտ, եթե հասցեազրվում են կոնկրետ հանրային կարիքի, ծառայում են օրինական նպատակի և համաշափ են այդ նպատակին ու չեն չարաշահվելու կամ կիրառվելու կամայական եղանակով,

9.6) – յուրաքանչյուր ոք ունի խաղաղ եղանակով սեփականություն ունենալու իրավունք՝ միանձնյա կամ համատեղ: Ոչ մեկին չի կարելի զրկել իր սեփականությունից՝ բացառությամբ այն դեպքերի, եթե դա է պահանջում հանրային շահը՝ օրենքով սահմանված պայմանների առկայությամբ և միջազգային հանձնառություններին և պարտավորություններին համապատասխան:

10) – Վերահաստատելով՝ մարդու իրավունքները և հիմնարար ազատություններն իմանալու և դրանց համաձայն գործելու և, ինչպես միանձնյա, այնպես էլ՝ այլ անձանց հետ համատեղ, դրանց խթանման ու պաշտպանության ակտիվութեան օժանդակելու անձի իրավունքներն արդյունավետորեն ապահովելու իրենց հանձնառությունը՝ Մասնակից պետություններն արտահայտում են իրենց այարտավորությունը.

10.1) – հարգել յուրաքանչյուրի իրավունքը՝ միանձնյա կամ այլ անձանց հետ համատեղ, ազատորեն վիճութել, ստանալ և տարածել տեսակետներ և տեղեկություններ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ, այդ թվում՝ այդպիսի տեսակետներ և տեղեկություններ տարածելու և հրապարակելու իրավունքները,

10.2) – հարգել յուրաքանչյուրի իրավունքը՝ միանձնյա կամ այլ անձանց հետ համատեղ, ուսումնասիրել և քննարկել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանման հարցը և զարգացնել ու քննարկել կարծիքներ մարդու իրավունքների պաշտպանության բարելավման և մարդու իրավունքների ոլորտում միջազգային չափանիշների պահպանումն ապահովելու առավել կատարելագործված միջոցների վերաբերյալ,

10.3) – ապահովել, որ անհատներին թույլ տրվի իրականացնել միավորումներ կազմելու ազատությունը, այդ թվում՝ այնպիսի հասարակական կազմակերպություններ կազմելու, դրանց միանալու և դրանց գործունեությանը արդյունավետ կերպով մասնակցելու իրավունքը, որոնք գրաղվում են մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին աջակցելով և պաշտպանությամբ, այդ թվում՝ արհեստակցական միությունները և մարդու իրավունքների ոլորտի նոնիտորինգային խմբերը,

10.4) – թույլ տալ այդպիսի խմբերի և կազմակերպությունների անդամներին անարգել մուտք ունենալ և հաղորդակցվել իրենց պետություններում և դրանցից դուրս գործող նպանատիպ մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ, իրականացնել փոխանակումներ, շփումներ և համագործակցություն նմանատիպ խմբերի և կազմակերպությունների հետ, ինչպես նաև, մարդու իրավունքներին և հիմնարար ազատությունների աջակցելու և պաշտպանելու նպատակով, օրենքով սահմանված կարգով խնդրել, ստանալ և օգտվել ազգային և միջազգային աղբյուրներից կամավոր հիմունքներով տրամադրվող ֆինանսական նվիրատվություններից,

11) – Մասնակից պետություններն այնուհետև վերահաստատում են, որ մարդու իրավունքների և ազատությունների խախտումների մասին մեղադրանքներ հնչելու դեպքում առկա իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները ներառում են.

11.1) – համապատասխան իրավաբանական օգնություն վնատրելու և ստանալու՝ անձի իրավունքը,

11.2) – մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները պաշտպանելիս՝ անձի՝ այլ անձանց օժանդակության համար դիմելու և նրանցից դա ստանալու իրավունք, ինչպես նաև մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները պաշտպանելու հարցում այլ անձանց օգնելու իրավունքը,

11.3) - անհատների կամ խմբերի՝ իրենց անունից մարդու իրավունքների չարաշահումների մասին մեղադրանքներ ստանալու և քննելու իրավասություն ունեցող միջազգային մարմինների հետ հաղորդակցվելու իրավունքը,

12) Մասնակից պետությունները ԵԱՀԽ մարդկային ուղղության ոլորտում Վիեննայի եզրափակիչ փաստաթղթով ստանձնած հանձնառությունների կատարման հարցում առավել մեծ

թափանցիկություն ապահովելու նպատակով որոշում են ընդունել Մասնակից պետությունների կողմից ուղարկված դիտորդների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ու այլ շահագրգիռ անձանց ներկայությունը դատավարություններին՝ որպես վստահության ձևավորմանն ուղղված միջոց, ազգային օրենսդրությամբ և միջազգային իրավունքով սահմանված կարգով. հասկանալի է, որ դատավարությունը կարող է անցկացվել դռնիքակ միայն օրենքով սահմանված հանգամանքներում և միջազգային իրավունքով ստանձնած պարտավորություններին և միջազգային հանձնառություններին համապատասխան:

13) Մասնակից պետությունները որոշում են հատուկ ուշադրություն դարձնել երեխայի իրավունքների ճանաչմանը, նրա քաղաքացիական իրավունքներին և անձնական ազատություններին, նրա տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին և բռնության ու շահագործման բոլոր ձևերի դեմ հատուկ պաշտպանության նրա իրավունքին: Նրանք քննարկելու են 1990 թվականի հունվարի 26-ին ստորագրության համար բացված՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային միանալու հարցը, եթե դեռևս դա չեն արել: Իրենց ներպետական օրենսդրության մեջ նրանք ճանաչելու են երեխայի իրավունքները, ինչպես որ դրանք ամրագրված են այն միջազգային համաձայնագրերում, որոնց նրանք կողմ են հանդիսանում:

14) Մասնակից պետությունները համաձայնում են իրենց երկրներում խրախուսել այլ Մասնակից պետություններից եկած ուսանողների և պրակտիկանտների, այդ թվում՝ մասնագիտական և տեխնիկական դասընթացներին մասնակցող անձանց համար ուսումնառության պայմանների ստեղծումը: Նրանք նաև համաձայնում են խթանել իրենց երկրների երիտասարդների ճամփորդություններն այլ Մասնակից պետություններ՝ կրթություն ստանալու համար, և, այդ նպատակով, խրախուսում են, անհրաժեշտության դեպքում, երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի կնքումը համապատասխան պետական հաստատությունների, կազմակերպությունների և կրթական հաստատությունների միջև:

15) Մասնակից պետությունները գործելու են այնպես, որ դյուրագնեն դատապարտված անձանց փոխանցումը, և խրախուսելու են այն Մասնակից պետություններին, որոնք 1983 թվականի նոյեմբերի 21-ին Ստրավուրգում ստորագրված՝ «Դատապարտված անձանց փոխանցման մասին» կոնվենցիայի կողմ չեն հանդիսանում, քննարկել այդ կոնվենցիային միանալու հարցը:

16) Մասնակից պետությունները՝

16.1) – վերահաստատում են խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիճն արգելելուն, նման գործելակերպը կանխարգելելուն և պատժելուն ուղղված՝ արդյունավետ օրենսդրական, վարչական, դատական և այլ միջոցներ ձեռնարկելու, մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները ուսնահարող՝ հոգեբուժական կամ այլ բժշկական գործելակերպից անձանց պաշտպանելու և այդորինակ գործելակերպը կանխարգելելուն և պատժելուն ուղղված արդյունավետ միջոցներ ձեռնարկելու իրենց հանձնառությունը.

16.2) – մտադիր են անհապաղ քննարկել, եթե դա դեռևս չեն արել, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատիճի դեմ» կոնվենցիային միանալու և, կոնվենցիայի 21-րդ և 22-րդ հոդվածներին համապատասխան, խոշտանգումների դեմ կոմիտեի իրավասությունները ճանաչելու և Կոմիտեի իրավասության վերաբերյալ 20-րդ հոդվածով նախատեսված վերապահումներից հրաժարվելու հարցը.

16.3) – ընդգծում են, որ որևէ բացառիկ հանգամանք՝ լինի դա պատերազմական դրություն կամ պատերազմի սպառնալիք, ներքին քաղաքական անկայունություն կամ որևէ այլ արտակարգ դրություն, չի կարող վկայակոչվել որպես խոշտանգման արդարացում.

16.4) – ապահովելու են, որ խոշտանգումների արգելքի վերաբերյալ ուսուցումը և տեղեկատվությունը լիարժեքորեն ներառվեն իրավապահ մարմինների աշխատակիցների՝ քաղաքացիական կամ զինվորական, բժշկական անձնակազմի, պետական պաշտոնատար և այն բոլոր անձանց վերապատրաստման դասընթացներում, որոնք որևէ առնչություն ունեն որևէ անձի ձերբակալության, կալանքի կամ ազատազրկման որևէ ձևի ենթարկված անձանց անազատության մեջ պահելու, հարցաքննության կամ նրանց պահելու պայմաններին.

16.5) – կանոնավոր կերպով վերանայելու են հարցաքննության կանոնները, ցուցումները, մեթոդները և գործելակերպը, ինչպես նաև իրենց իրավագորության ներքո գտնվող ցանկացած տարածքում ձերբակալության, կալանքի կամ ազատազրկման որևէ ձևի ենթարկված անձանց անազատության մեջ պահելու և նրանց պահելու պայմաններին կապված հարցերը՝ խոշտանգումների դեպքերը կանխարգելելու նպատակով.

16.6) – առաջնահերթության կարգով ուսումնասիրելու և անհրաժեշտ քայլեր են ձեռնարկելու, ԵԱՀԽ մարդկային ուղղության ոլորտի հանձնառությունների արդյունավետ կատարման նպատակով համաձայնեցված միջոցներին և ընթացակարգերին համապատասխան, խոշտանգման և այլ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի այն դեպքերի առնչությամբ, որոնք հայտնի են դարձել իրենց պաշտոնական ուղիներով կամ տեղեկատվության որևէ այլ վստահելի աղբյուրից.

16.7) – գործելու են այն գիտակցմամբ, որ խոշտանգման և այլ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկված որևէ անձի կյանքը և անձեռնմխելիությունը պահպանելը և երաշխավորելը միակ չափորոշիչն է լինելու համապատասխան իրավական պաշտպանության միջոց ձեռնարկելիս հրատապությունը և գերակայությունը որոշելու հարցում, և, հետևաբար, խոշտանգման և այլ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ցանկացած դեպքի ուսումնասիրումը որևէ այլ միջազգային մարմնի կամ մեխանիզմի շրջանակներում չի կարող վկայակոչվել որպես ԵԱՀԽ մարդկային ուղղության ոլորտի հանձնառությունների արդյունավետ կատարումն ապահովող համաձայնեցված միջոցներին և ընթացակարգերին համապատասխան ուսումնասիրությունից և անհրաժեշտ քայլեր ձեռնարկելուց խուսափելու պատճառաբանություն:

17) – Մասնակից պետությունները՝

17.1) – վկայակոչում են Վիեննայի եզրափակիչ փաստաթղթով ստանձնած՝ մահապատժի հարցը մշտապես քննարկելու և համապատասխան միջազգային կազմակերպությունների շրջանակներում համագործակցելու իրենց հանձնառությունը.

17.2) – այդ համատեքստում վկայակոչում են Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր վեհաժողովի կողմից 1989 թվականի դեկտեմբերի 15-ին ընդունված՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրին կից երկրորդ կամլնտիր արձանագրությունը, որի նպատակը նահապատժի վերացումն է.

17.3) – հաշվի են առնում մահապատժի կիրառման հարցում միջազգային հանրության կողմից ընդունված սահմանափակումները և երաշխիքները, մասնավորապես, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածը.

17.4) – հաշվի են առնում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի վեցերորդ արձանագրության՝ մահապատժի վերացմանն առնչվող դրույթները.

17.5) – հաշվի են առնում մի շարք Մասնակից պետությունների կողմից մահապատժի վերացման ուղղությամբ վերջերս ձեռնարկված միջոցները.

17.6) – հաշվի են առնում մի շարք հասարակական կազմակերպությունների գործունեությունը մահապատժի վերացման ուղղությամբ.

17.7) – Մարդկային ուղղությանը նվիրված խորհրդաժողովի շրջանակներում փոխանակելու են տեղեկություններ մահապատժի վերացման հարցի վերաբերյալ և շարունակելու են քննարկել այդ հարցը.

17.8) – հանրության համար հասանելի են դարձնելու մահապատժի կիրառմանը վերաբերող տեղեկատվությունը:

18) Մասնակից պետությունները՝

18.1) – հաշվի են առնում, որ Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների հանձնաժողովը ճանաչել է յուրաքանչյուրի՝ զինվորական ծառայությունից խղճի թելադրանքով հրաժարվելու իրավունքը.

18.2) – հաշվի են առնում մի շարք Մասնակից պետությունների կողմից խղճի թելադրանքով հրաժարման հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից խղճի թելադրանքով հրաժարվելու ուղղությամբ վերջերս ձեռնարկված միջոցները.

18.3) – հաշվի են առնում մի շարք հասարակական կազմակերպությունների գործունեությունը պարտադիր զինվորական ծառայությունից խղճի թելադրանքով հրաժարվելու հարցի ուղղությամբ.

18.4) – համաձայնում են քննարկել, եթե դեռևս դա չեն արել, խղճի թելադրանքով հրաժարման պատճառներին համատեղելի այլընտրանքային ծառայության տարրեր ձևերի ներդրումը, որտեղ այլընտրանքային ծառայության այդօրինակ ձևերը, ըստ էության, ոչ զինվորական կամ քաղաքացիական բնույթի են, բխում են հանրության շահից և չեն կրում պատժի քննույթը.

18.5) – հանրությանը հասանելի են դարձնելու այդ հարցին վերաբերող տեղեկատվությունը.

18.6) – շարունակելու են քննարկել Մարդկային ուղղությանը նվիրված խորհրդաժողովի շրջանակներում պարտադիր զինվորական ծառայությունից, որտեղ այն գոյություն ունի, անձանց՝ զինված ծառայությունից խղճի թելադրանքով հրաժարման հիմքով ազատելուն վերաբերող հարցերը և փոխանակելու են տեղեկատվություն այդ հարցերի շուրջ:

19) Մասնակից պետությունները հաստատում են, որ իրենց քաղաքացիների միջև առավել ազատ տեղաշարժը և շփումները կարևոր են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և դրանց աջակցելու համատեքստում: Նրանք ապահովելու են, որ իրենց տարածքներ մուտք գործելու հարցում իրենց քաղաքականությունը լիովին համահունչ լինի Եզրափակիչ ակտի, Մադրիդի Եզրափակիչ փաստաթղթի և Վիեննայի Եզրափակիչ փաստաթղթի դրույթներին: Սինչ նրանք վերահաստատում են ԵԱՀԽ փաստաթղթերով ամրագրված հանձնառություններից չնահանջելու իրենց վճռականությունը, նրանք պարտա-

վորփում են լիարժեքորեն կատարել և բարելավել մարդկային շփումների ոլորտում իրենց ներկայիս հանձնառությունները, այդ թվում՝ երկողությունը և բազմակողման հիմքով: Այդ համատեքստում նրանք.

19.1) – ձգտելու են իրականացնել իրենց տարածքներ մուտք գործելու ընթացակարգերը, այդ թվում՝ մուտքի արտոնագրեր տրամադրելու և անձնագրային ու մաքսային հակողության ոլորտներում, պատշաճ կերպով և առանց չարդարացված ձգձգումների: Անհրաժեշտության դեպքում նրանք կրատելու են մուտքի արտոնագրերի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումներին սպասելու ժամանակը, ինչպես նաև պարզեցնելու են մուտքի արտոնագրերի դիմումների քննարկման գործելակերպը և նվազեցնելու են այդ դիմումներին ներկայացվող վարչական պահանջները.

19.2) – մուտքի արտոնագրերի դիմումներն ուսումնասիրելիս ապահովելու են, որ դրանց ընթացք տրվի հնարավորինս արագ՝ ի թիվս այլ հարցերի, ընտանեկան, անձնական կամ մասնագիտական կարևոր նկատառումները պատշաճ կերպով հաշվի առնելու նպատակով, մասնավորապես՝ հրատապ, մարդասիրական դեպքերում.

19.3) – ձգտելու են, անհրաժեշտության դեպքում, նվազեցնել մուտքի արտոնագրերի համար դիմումների վճարները հնարավոր նվազագույն մակարդակի:

20) Համապատասխան Մասնակից պետությունները խորհրդակցելու և, անհրաժեշտության դեպքում, համագործակցելու են այնպիսի խնդիրներ քննարկելիս, որոնք կարող են ի հայտ գալ անձանց առավել մեծ տեղաշարժի արդյունքում:

21) Մասնակից պետություններն առաջարկում են ԵԱՀԽ Հելսինկիի հաջորդ հանդիպմանը քննարկել հյուսատոսական հարցերով փորձագետների հանդիպում անցկացնելու նպատակահարմարությունը:

22) Մասնակից պետությունները վերահաստատում են, որ միզրանտ աշխատողների իրավունքների պաշտպանությունը և դրանց աջակցելն ունեն մարդկային ուղղություն: Այդ համատեքստում նրանք.

22.1) – համաձայնում են, որ միզրանտ աշխատողների իրավունքների պաշտպանությունն ու դրանց աջակցելը բոլոր Մասնակից պետությունների խնդիրն է և, որպես այդպիսին, պետք է քննարկվի ԵԱՀԽ գործընթացի շրջանակներում:

22.2) – վերահաստատում են իրենց հանձնառությունը՝ լիարժեք կերպով իրականացնել իրենց ներպետական օրենսդրության մեջ միզրանտ աշխատողների այն իրավունքները, որոնք սահմանված են այն միջազգային համաձայնագրերում, որոնց նրանք կողմ են հանդիսանում:

22.3) – գտնում են, որ միզրանտ աշխատողների իրավունքներին վերաբերող ապագա միջազգային փաստաթղթերում իրենք պետք է հաշվի առնեն այն փաստը, որ այդ հարցը կարևոր է իրենց բոլորի համար.

22.4) – արտահայտում են իրենց պատրաստակամությունը՝ ԵԱՀԽ հաջորդ հանդիպումներում քննարկել միզրանտ աշխատողների և նրանց ընտանիքների իրավունքների հետազա աջակցման համապատասխան ասպեկտները:

23) Մասնակից պետությունները վերահաստատում են Վիեննայի եզրափակիչ փաստաթղթում արտահայտած իրենց համոզունքը, որ տնտեսական, սոցիալական և մշակութային ի-

բավունքներին, ինչպես նաև քաղաքացիական և քաղաքական իրավունքներին աջակցելը շափազանց կարևոր է մարդկային արժանապատվության և յուրաքանչյուր անձի օրինական ձգտումներին հասնելու տեսանկյունից: Նրանք նաև վերահաստատում են Եվրոպայում տնտեսական համագործակցության վերաբերյալ Բննի խորհրդաժողովի փաստաթղթով ստանձնած՝ սոցիալական արդարությունը և կյանքի ու աշխատանքի պայմանների բարելավումը խթանելու իրենց հանձնառությունը: Անհրաժեշտ բոլոր միջոցներով տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների լիարժեք իրականացմանը հետզիետեւ հասնելու նպատակով իրենց ջանքերի գործադրումը շարունակելու համատեքստում նրանք հատուկ ուշադրություն են դարձնելու գրադարձության, բնակարանային, սոցիալական ապահովության, առողջության, կրթության և մշակույթի ոլորտի հիմնախնդիրներին:

24) Մասնակից պետություններն ապահովելու են, որ վերը նշված բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումը ենթակա չլինի որևէ սահմանափակման՝ բացառությամբ այն սահմանափակումների, որոնք սահմանված կլինեն օրենքով և համահունչ կլինեն միջազգային իրավունքով իրենց ստանձնած պարտավորություններին, մասնավորապես՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի շրջանակներում, ինչպես նաև իրենց միջազգային հանձնառություններին, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի շրջանակներում: Այդ սահմանափակումները բացառիկ բնույթ են կրելու: Մասնակից պետություններն ապահովելու են, որ այդ սահմանափակումները չարաշահվեն և չկիրառվեն կամայականորեն, այլ կիրառվեն այնպես, որ ապահովվի այդ իրավունքների արդյունավետ իրականացումը:

Իրավունքների և ազատությունների նկատմամբ ցանկացած սահմանափակում ժողովրդավարական հասարակությունում պետք է կապված լինի կիրառելի իրավունքով սահմանված նպատակներից մեկին և հստակ կերպով համաշափ լինի այդ իրավունքի նպատակին:

25) Մասնակից պետությունները հաստատում են, որ արտակարգ դրության ժամանակ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտի պարտավորություններից շեղումները պետք է մնան միջազգային իրավունքով ամրագրված սահմանների շրջանակներում, մասնավորապես՝ իրենց համար պարտադիր բնույթ կրող համապատասխան միջազգային փաստարդերով, հատկապես այն իրավունքների մասով, որոնցից շեղվել չի կարելի: Նրանք նաև վերահաստատում են, որ

25.1) – այդ պարտավորություններից շեղում արձանագրող միջոցները պետք է ձեռնարկվեն այդ փաստարդերով սահմանված ընթացակարգային պահանջներին խիստ համապատասխան,

25.2) – արտակարգ դրություն պետք է հայտարարել պաշտոնապես և հրապարակային ձևով և օրենքով սահմանված դրույթներին համապատասխան,

25.3) – պարտավորություններից շեղում արձանագրող միջոցները սահմանափակվելու են այնքանով, որքանով դա պահանջում է դրության սրությունը,

25.4) – այդ միջոցները խորականություն չեն մտցնելու բացառապես ռասայի, մաշկի գույնի, սերի, լեզվի, կրոնի, սոցիալական ծագման կամ փոքրամասնության պատկանելության հիմքով:

III

26) Մասնակից պետությունները գիտակցում են, որ կայացած ժողովրդավարությունը կախված է որպես ազգային կյանքի բաղկացուցիչ մաս գոյություն ունեցող ժողովրդավարական արժեքներից և գործելակերպից, ինչպես նաև զգալի թվով ժողովրդավարական հաստատություններից: Նրանք, հետևաբար, խրախուսելու, ապահովելու և, անհրաժեշտության դեպքում,

աջակցելու են գործնական համագործակցության ուղղված ջանքերին և տեղեկությունների, գաղափարների և մասնագիտական գիտելիքների փոխանակմանն ու առանձին անձանց, խնդերի և կազմակերպությունների միջև ուղղակի շփումներին և համագործակցությանը հետևյալ ոլորտներում.

- սահմանադրական իրավունք, բարեփոխում և զարգացում,
- լնտրական օրենսդրություն, վարչարարություն և դիտարկում,
- դատարանների և իրավական համակարգերի ստեղծում և կառավարում,
- անկողնակալ և արդյունավետ պետական ծառայության զարգացում, որտեղ աշխատանքի ընդունումն ու առաջխաղացումը կատարվում են ըստ արժանիքների,
- իրավապահ համակարգ,
- տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում,
- տեղեկատվության հասանելիություն և անձնական կյանքի գաղտնիության պաշտպանություն,
- քաղաքական կուսակցությունների և նրանց դերի զարգացում բազմակարծիք հասարակություններում,
- ազատ և անկախ արհեստակցական միություններ,
- համագործակցային շարժումներ,
- ազատ միավորումների և հանրային շահերի խնդերի այլ ձևերի զարգացում,
- լրագրություն, անկախ լրատվության միջոցներ և հոգևոր ու մշակութային կյանք,
- ժողովրդավարական արժեքների, հաստատությունների և գործելակերպի ուսուցում կրթական հաստատություններում, ինչպես նաև ազատ ճանաչողության մքնողորտի ապահովում:

Այդօրինակ ջանքերը կարող են տարածվել ԵԱՀԽ մարդկային ուղղության սահմաններում նախատեսված համագործակցության վրա՝ ներառյալ վերապատրաստումը, տեղեկությունների, գրերի և ուսումնական նյութերի, համագործակցային ծրագրերի և նախագծերի փոխանակումը, գիտառուսումնական և մասնագիտական փոխանակումները և խորհրդաժողովները, կրթարոշակները, հետազոտական դրամաշնորհները, փորձագիտական կարծիքի և խորհրդատվության տրամադրումը, գործարար և գիտական կապերը և ծրագրերը:

27) Մասնակից պետությունները նաև նպաստելու են մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ոլորտում անկախ ազգային հաստատությունների ստեղծմանն ու հզորացմանը, որոնք ծառայելու են որպես կիզակետ Մասնակից պետություններում այդ հաստատությունների գործունեությունը համակարգելու և այդ հաստատությունների փոխակցության համար: Նրանք առաջարկում են, որ խրախուսվի համագործակցությունը Մասնակից պետությունների խորհրդարանականների միջև, այդ թվում՝ նաև միջխորհրդարանական ասոցիացիաների միջոցով և, ի թիվս այլ եղանակների, համատեղ հանձնաժողովների, խորհրդարանականների մասնակցությամբ հեռուստատեսային բանավեճերի, հանդիպումների և կլոր սեղանի քննարկումների միջոցով: Նրանք նաև խրախուսելու են գործող հաստատություններին, ինչպիսիք են Սիավորված ազգերի կազմակերպության համակարգում գործող կազմակերպությունները և Եվրոպայի խորհուրդը, շարունակել և ընդլայնել այն աշխատանքը, որը վերջիններս սկսել են այդ ոլորտում:

28) Մասնակից պետությունները ճանաչում են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում Եվրոպայի խորհրդի կարևոր փորձառությունը և համաձայնում են քննարկել այն հետազա ուղիները և միջոցները, որոնք հնարավորություն կրնածեն Եվրոպայի խորհրդին իր ներդրումն ունենալու ԵԱՀԽ մարդկային ուղղության հարցում: Նրանք համաձայնում են, որ այդ ներդրման բնույթը հնարավոր կլինի քննարկել ԵԱՀԽ ապագա համաժողովներից մեկի ժամանակ:

29) Մասնակից պետությունները քննարկելու են փորձագետների համովայում կամ սեմինար հրավիրելու հարցը՝ վերանայելու և քննարկելու համար Մասնակից պետություններում կենսութեակ ժողովրդավարական հաստատություններին աջակցելուն ու կայունության ապահովմանն ուղղված համագործակցության միջոցները, ներառյալ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում Մասնակից պետությունների օրենսդրության համեմատական ուսումնասիրությունները, հիմնվելով, ի թիվս այլ հարցերի, այս ոլորտում Եվրոպայի խորհրդի ձեռք բերած փորձի և «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» հանձնաժողովի գործունեության վրա:

IV

30) Մասնակից պետությունները ճանաչում են, որ ազգային փոքրամասնություններին առնչվող հարցերը կարող են գոհացուցիչ լուծում ստանալ միայն իրավունքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական քաղաքական դաշտի և անկախ դատական համակարգի պարագայում: Այս շրջանակում երաշխավորվում է լիարժեք հարգանք մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ, բոլոր քաղաքացիների համար հավասար իրավունքներ և կարգավիճակ, նրանց օրինական շահերի և ճգոտումների ազատ արտահայտում, քաղաքական քաղմակարծություն, սոցիալական հանդուժողականություն և այնպիսի իրավական կանոնների պահպանում, որոնք արդյունավետ սահմանափակումներ են նախատեսում պետական իշխանության շարաշահման մասով:

Նրանք նաև ճանաչում են հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ քաղաքական կուսակցությունների, արիեստակցական միությունների, մարդու իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունների և կրոնական խմբերի կարևոր դերը հանդուժողականությանը, մշակութային քաղմազանությանը նպաստելու և ազգային փոքրամասնություններին վերաբերող կարգավորելու գործում:

Նրանք այնուհետև վերահաստատում են, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների նկատմամբ հարգանքը՝ որպես համընդհանուր կերպով ճանաչված մարդու իրավունքներ, էական գործոն է Մասնակից պետություններում խաղաղության, արդարության, կայունության և ժողովրդավարության համար:

31) Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն լիարժեքորեն և արդյունավետորեն իրականացնելու իրենց իրավունքները և հիմնարար ազատությունները՝ առանց խորականության և օրենքի առջև լիարժեք հավասարության պայմաններում:

Մասնակից պետությունները, անհրաժեշտության դեպքում, ընդունելու են հատուկ միջոցներ՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացման և դրանցից օգտվելու հարցում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար այլ քաղաքացիների հետ լիարժեք հավասարություն ապահովելու նպատակով:

32) Ազգային փոքրամասնությանը պատկանելու անձի ընտրության հարցն է, և այդ ընտրության իրականացումը չպետք է բացասարար անդրադառնա տվյալ անձի վրա:

Ազգային փոքրամասնությանը պատկանող անձինք իրավունք ունեն ազատորեն արտահայտելու, պահպանելու և զարգացնելու իրենց էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական ինքնությունը և պահպանելու ու զարգացնելու իրենց մշակույթը բոլոր ասպեկտներով՝ իրենց կամքին հակառակ ծովման ենթարկվելու բոլոր փորձերի բացառման պայմաններում: Մասնավորապես, նրանք իրավունք ունեն.

32.1) – ազատորեն օգտագործելու իրենց մայրենի լեզուն անձնական և հասարակական կյանքում,

32.2) – ստեղծելու և պահպանելու իրենց սեփական կրթական, մշակութային և կրոնական հաստատությունները, կազմակերպությունները կամ ասոցիացիաները, որոնք կարող են

փնտրել կամավոր ֆինանսական և այլ ներդրումներ, ինչպես նաև պետական աջակցություն՝ ազգային օրենսդրությանը համապատասխան,

32.3) – դավանելու և հետևելու իրենց կրոնին, ներառյալ կրոնական նյութեր ձեռք բերելը, տիրապետելու ու օգտագործելը, ինչպես նաև անցկացնելու կրոնական կրթական գործունեություն իրենց մայրենի լեզվով,

32.4) – հաստատելու և պահպանելու անարգել շփումներ մեկմեկու հետ իրենց երկրում, ինչպես նաև՝ միջսահմանային շփումներ այլ պետությունների այն քաղաքացիների հետ, որոնք ընդհանուր էքնիկ կամ ազգային ծագում, մշակութային ժառանգություն կամ կրոնական համոզմունքներ ունեն,

32.5) – տարածելու, օգտվելու և փոխանակելու տեղեկություններ իրենց մայրենի լեզվով,

32.6) – ստեղծելու և պահպանելու կազմակերպություններ կամ ասոցիացիաներ իրենց երկրում և մասնակցելու միջազգային հասարակական կազմակերպությունների աշխատանքներին:

Ազգային փոքրանահանություններին պատկանող անձինք կարող են իրականացնել և օգտվել իրենց իրավունքներից միանձնյա կամ իրենց խմբի այլ անդամների հետ համատեղ: Այդպիսի որևէ իրավունքի իրականացումը կամ չիրականացումը չպետք է բացասարար անդրադանա ազգային փոքրանահանությանը պատկանող անձի վրա:

33) Մասնակից պետություններն իրենց տարածքներում պաշտպանելու են ազգային փոքրանահանությունների էքնիկ, մշակութային, լեզվական և կրոնական ինքնությունը և պայմաններ են ստեղծելու այդ ինքնությանը նպաստելու համար: Այդ նպատակով, պատշաճ խորհրդակցություններ անցկացնելուց հետո, նրանք կձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ, ներառյալ այդ փոքրանահանությունների կազմակերպությունների կամ ասոցիացիաների հետ շփումները, յուրաքանչյուր պետության որոշումների ընթացակարգերին համապատասխան:

Այդպիսի ցանկացած միջոց պետք է համապատասխանի հավասարության և խտրականության բացառման սկզբունքներին՝ հաշվի առնելով տվյալ Մասնակից պետության մյուս քաղաքացիներին:

34) Մասնակից պետությունները ջանալու են ապահովել, որ ազգային փոքրանահանություններին պատկանող անձինք, անկախ տվյալ պետության պաշտոնական լեզուն կամ լեզուները սովորելու անհրաժեշտությունից, ունենան համապատասխան հնարավորություններ իրենց մայրենի լեզուն կամ իրենց մայրենի լեզվով դասավանդելու, ինչպես նաև, հնարավորության և անհրաժեշտության դեպքում, պետական մարմինների հետ հարաբերություններում այն օգտագործելու համար՝ գործող ազգային օրենսդրությանը համապատասխան:

Ուսումնական հաստատություններում պատմության և մշակույթի դասավանդման համատեքստում նրանք նաև հաշվի են առնելու ազգային փոքրանահանությունների պատմությունը և մշակույթը:

35) Մասնակից պետությունները հարգելու են ազգային փոքրանահանություններին պատկանող անձանց՝ հանրային գործերին արդյունավետ մասնակցություն ունենալու իրավունքը, այդ թվում մասնակցությունը փոքրանահանությունների ինքնությունը զարգացնելուն և դրան նպաստելուն առնչվող գործերին:

Մասնակից պետությունները հաշվի են առնում այն ջանքերը, որոնք գործադրվել են որոշ ազգային փոքրանահանությունների էքնիկ, մշակութային, լեզվական և կրոնական ինքնությունը պաշտպանելու և դրան նպաստելու համար պայմաններ ստեղծելու ուղղությամբ՝ որպես այդ նպատակներին հասնելու հմարավոր միջոց ստեղծելով պատշաճ՝ տեղական և

ինքնուրույն վարչակազմեր, որոնք համապատասխանում են այդ փոքրամասնությունների առանձնահատուկ պատմական և տարածքային պայմաններին և տվյալ պետության քաղաքականությանը:

36) Մասնակից պետությունները ճանաչում են ազգային փոքրամասնություններին վերաբերող հարցերում կառուցողական փոխգործակցության ամրապնդման առանձնահատուկ կարևորությունը: Նման համագործակցությունը նպատակ ունի խրանելու փոխըմբռնումը և փոխադարձ վստահությունը, բարեկամական և բարիդրացիական հարաբերությունները, միջազգային խաղաղությունը, անվտանգությունը և արդարությունը:

Մասնակից պետություններից յուրաքանչյուրը նպաստելու է փոխադարձ հարգանքի, փոխըմբռնման, համագործակցության և համերաշխության մքնուրութի ձևավորմանը իր տարածքում ապրող բոլոր անձանց շրջանում՝ առանց որևէ խտրականության, էքնիկ կամ ազգային ծագման կամ կրոնական հիմքով, և խրախուսելու է խնդիրների լուծմանը հասնել իրավունքի գերակայության սկզբունքների վրա հիմնված երկխոսության միջոցով:

37) Այս հանձնառություններից և ոչ մեկը չի կարող մեկնաբանվել որպես որևէ գործունեությամբ զբաղվելու կամ որևէ արարքի կատարման իրավունք տրամադրող, որը հակասում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության նպատակներին և սկզբունքներին, միջազգային իրավունքով ստանձնած այլ պարտավորությունների կամ Եզրափակիչ ակտի դրույթներին, այդ թվում՝ պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքին:

38) Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները պաշտպանելու և դրանց աջակցելուն ուղղված ջանքեր գործադրելիս Մասնակից պետությունները լիարժեք կերպով պահպանելու են մարդու իրավունքների ոլորտում գործող կոնվենցիաներով և այլ համապատասխան միջազգային փաստարդերով ստանձնած իրենց պարտավորությունները և քննարկելու են համապատասխան կոնվենցիաներին, այդ թվում՝ այն կոնվենցիաներին, որոնք ամրագրում են անհատական գանգատների իրավունքը, միանալու հարցը, եթե դեռևս - չեն միացել դրանց:

39) Մասնակից պետությունները սերտորեն համագործակցելու են համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ, որոնց նրանք անդամակցել են, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության և, անհրաժեշտության դեպքում, Եվրոպայի խորհրդի շրջանակներում, հաշվի առնելով իրենց շարունակական գործունեությունն ազգային փոքրամասնություններին առնչվող հարցերի ոլորտում:

Նրանք քննարկելու են փորձագետների հանդիպում իրավիրելու հարցը՝ ազգային փոքրամասնությունների հարցերը հանգամանալից քննարկելու նպատակով:

40) Մասնակից պետությունները հստակ կերպով և միանշանակ դատապարտում են ամբողջատիրությունը, ռասայական կամ էքնիկ ատելությունը, հրեատեցությունը, այլատյացությունը և խտրականությունը որևէ մեկի նկատմամբ, ինչպես նաև կրոնական և գաղափարական հիմքով հետապնդումը: Այդ համատեքստում նրանք նաև ճանաչում են գնչուների առանձնահատուկ հիմնախնդիրները:

Նրանք հայտարարում են այդ երևոյթների դեմ՝ դրանց բոլոր ձևերով, պայքարելու հարցում ջանքերն ակտիվացնելու իրենց անկուտրում վճռականությունը և, հետևաբար.

40.1) – ձեռնարկելու են արդյունավետ միջոցներ, այդ թվում, իրենց սահմանադրական համակարգերին և միջազգային պարտավորություններին համապատասխան, ընդունելու են այնպիսի օրենքներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, այնպիսի արարքների դեմ պաշտպանություն ապահովելու նպատակով, որոնք իրակրում են բռնություն անձանց կամ խմբերի

դեմ՝ ազգային, ուսայական, էքսիլ կամ կրոնական խտրականության, քշնամանքի կամ ատելության, այդ թվում՝ հրեատեցության հիմքով,

40.2) – հանձն են առնելու ծեռնարկել անհրաժեշտ և համաշափ միջոցներ՝ պաշտպանելու համար այն անձանց կամ խմբերին, որոնք կարող են ենթարկվել խտրականության, քշնամանքի կամ բռնության սպառնալիքների կամ արարքների իրենց ուսայական, էքսիլ, մշակութային, լեզվական կամ կրոնական ինքնության պատճառով, և պաշտպանելու նրանց սեփականությունը,

40.3) – ծեռնարկելու են արդյունավետ միջոցներ, իրենց սահմանադրական համակարգերին համապատասխան, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում խթանելու համար փոխընթացումը և հանդուրժողականությունը, հատկապես՝ կրթության, մշակույթի և տեղեկատվության ոլորտներում,

40.4) – ջանալու են ապահովել, որ կրթության նպատակների շրջանակներում հատուկ ուշադրություն դարձվի ուսայական նախապաշտամունքի և ատելության խնդրին, ինչպես նաև տարբեր քաղաքակրթությունների և մշակույթների նկատմամբ հարգանքի արմատավորմանը,

40.5) - ճանաչելու են անձի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը և գգտելու են ճանաչել, իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան, շահագրգիռ անձանց և խմբերի՝ խտրականության, այդ թվում՝ ուսիզմի և օտարատյացության գործողությունների դեմ բողոքներ նախաձեռնելու և դրանց աջակցելու իրավունքը,

40.6) – քննարկելու են խտրականության իիմնախնդրին արձագանքող միջազգային ֆաստարդերին միանալու հարցը, եթե դեռևս չեն միացել դրանց, և ապահովելու են դրանցով ստանձնած պարտավորությունների լիարժեք կատարումը, այդ թվում՝ պարբերական գեկույցներ ներկայացնելու վերաբերյալ պարտավորությունները,

40.7) – քննարկելու են նաև այն միջազգային մեխանիզմների ընդունումը, որոնք թույլ են տալիս պետություններին և անձանց խտրականության մասին հաղորդագրություններ ներկայացնել միջազգային մարմիններ:

V

41) Մասնակից պետությունները վերահաստատում են ԵԱՀԽ մարդկային ուղղության նկատմամբ իրենց նվիրվածությունը և ընդգծում դրա՝ որպես Եվրոպայում անվտանգության և համագործակցության հարցում հավասարակշռված մոտեցման բաղկացուցիչ մասի կարևորությունը: Նրանք համաձայնում են, որ ԵԱՀԽ Մարդկային ուղղությանը նվիրված խորհրդաժողովը և ԵԱՀԽ Վիեննայի եզրափակիչ փաստարդի՝ մարդկային ուղղությանը վերաբերող բաժնում նկարագրված մարդկային ուղղության մեխանիզմն ապացուցել են իրենց արժեքը՝ որպես իրենց միջև երկխոսության և համագործակցության խթանման և համապատասխան առանձնահատուկ հարցերի լուծմանն օժանդակող մերողներ: Նրանք համոզնունք են հայտնում, որ այդ ամենը պետք է շարունակել և զարգացնել՝ որպես ԵԱՀԽ ընդլայնող գործընթացի մաս:

42) Մասնակից պետությունները ճանաչում են Վիեննայի եզրափակիչ ակտի՝ ԵԱՀԽ մարդկային ուղղությանը վերաբերող բաժնի 1-ին և 4-րդ պարբերություններում նկարագրված ընթացակարգերի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը և այդ նպատակով որոշում են.

42.1) – հնարավորինս կարճ, սակայն չորս շաբաթից ոչ ուշ ժամկետում գրավոր պատասխանել այլ պետությունների կողմից 1-ին պարբերության համաձայն գրավոր ներկայացված՝ տեղեկատվություն ստանալու մասին դիմումներին ու ներկայացված փաստաթղթերին,

42.2) – որ 2-րդ պարբերությամբ նախատեսված երկողմ հանդիպումները տեղի են ունենալու հնարավորինս արագ և, որպես կանոն, այդ հանդիպումների համար դիմելուց հետո երեք շաբաթվա ընթացքում,

42.3) – ձեռնպահ մնալ 2-րդ պարբերությամբ նախատեսված երկողմ հանդիպման ընթացքում այնպիսի իրադրությունների և դեպքերի հետ կապված հարցեր բարձրացնելուց, որոնք կապ չունեն հանդիպման առարկայի հետ, եթե երկու կողմերը համաձայնություն ձեռք չեն բերել դրա վերաբերյալ:

43) Մասնակից պետություններն ուսումնասիրել են ԵԱՀԽ մարդկային ուղղության ոլորտի պարտավորությունների կատարման բարելավմանն ուղղված նոր միջոցներ ձեռնարկելու մասին առաջարկությունները: Այդ առնչությամբ նրանք քննարկել են այն առաջարկությունները, որոնք վերաբերում են իրավիճակի կամ կոնկրետ դեպքի ուսումնասիրության համար դիտորդներ ուղարկելուն, քննության և համապատասխան լուծումներ առաջարկելու համար զեկուցողներ նշանակելուն, ԵԱՀԽ Մարդկային ուղղության հարցերով կոմիտե ստեղծելուն, մարդկային ուղղության մեխանիզմում անձանց, կազմակերպություններին և հաստատություններին առավել ակտիվորեն ընդգրկելուն և համապատասխան հարցերի լուծմանն ուղղված՝ երկողմ և բազմակողմ շաճքերը խթանելուն:

Նրանք որոշում են շարունակել հանգամանալից քննարկել ԵԱՀԽ հետագա համաժողովներում այդ և նմանատիպ այլ առաջարկությունները, որոնք նպատակ ունեն հզորացնելու մարդկային ուղղության մեխանիզմը, և ԵԱՀԽ գործնքացի հետագա զարգացման համատերսում քննարկելու համապատասխան նոր միջոցներ ձեռնարկելու հարցը: Նրանք համաձայնում են, որ այդ միջոցները պետք է նպաստեն հետագա արդյունավետ առաջընթացի ապահովմանը, բախումների կանխարգելմանը և ԵԱՀԽ մարդկային ուղղության ոլորտում վստահության բարձացմանը:

44) Մասնակից պետությունների ներկայացուցիչներն իրենց խորին երախտագիտությունն են հայտնում Դանիայի ժողովրդին և Կառավարությանը Կոպենհագենի հանդիպումը գերազանց կազմակերպելու և Հանդիպմանը մասնակցող պատվիրակություններին ցուցաբերած շերմ հյուրընկալության համար:

45) ԵԱՀԽ Վիեննայի հաջորդ հանդիպման եզրափակիչ փաստաթղթում ներառված՝ ԵԱՀԽ Մարդկային ուղղությանը նվիրված խորհրդաժողովին առնչվող դրույթներին համապատասխան՝ Խորհրդաժողովի երրորդ հանդիպումը կայանալու և Մոսկվայում 1991 թվականի սեպտեմբերի 10-ից հոկտեմբերի 4-ը:

Կոպենհագեն, 1990 թվականի հունիսի 29

ՆԱԽԱԳԱՀՈՂԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

**ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՒՂԴՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՄՐԱՏՎԱՍԽՉՈՅՆԵՐԻ ՀԱՍԱՐՀԱՍԱՆԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԸ**

Նախագահողը նշում է, որ Մարդկային ուղղությանը նվիրված խորհրդաժողովի հանդիպումների հրապարակայնության և հասանելիության գործելակերպը, այնպես, ինչպես դրանք ապահովվել են Վիեննայի հանդիպման ընթացքում և ներառված են այդ հանդիպման եզրափակիչ փաստաթղթի XI հավելվածում, կարևոր է բոլոր Մասնակից պետությունների համար: Մարդկային ուղղությանը նվիրված խորհրդաժողովի հետագա հանդիպումներում այս գործելակերպին հետևելու և դրանք կատարելագործելու նպատակով Մասնակից պետությունները համաձայնություն են ձեռք բերում, որ անհրաժեշտ է պահպանել հրապարակայնության և հասանելիության հետևյալ գործելակերպը.

- Խորհրդաժողովի տարածքում, բացառությամբ այն տարածքների, որոնք նախատեսված են պատվիրակությունների և Գործադիր քարտուղարության ծառայությունների համար, շահագրգիռ հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) անդամների ազատ տեղաշարժի ապահովում: Այդ նպատակով, նրանց խնդրանքով, Գործադիր քարտուղարությունը նրանց կտրամադրի հավատարմագրման քարտեր,
- անարգել շփումներ շահագրգիռ հասարակական կազմակերպությունների անդամների և պատվիրակների, ինչպես նաև լրատվամիջոցների հավատարմագրված ներկայացուցիչների միջն,
- հասանելիություն բոլոր աշխատանքային լեզուներով Խորհրդաժողովի պաշտոնական փաստաթղթերի, ինչպես նաև ցանկացած այլ փաստաթղթի, որ պատվիրակները կցանկանան տրամադրել շահագրգիռ հասարակական կազմակերպությունների անդամներին,
- շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար հենարակության ընձեռում՝ պատվիրակներին ԵԱՀԽ մարդկային ուղղության վերաբերյալ հաղորդագրություններ փոխանցելու համար: Այդ նպատակով բոլոր պատվիրակությունների համար կապահովվեն փոստարկեր,
- շահագրգիռ հասարակական կազմակերպությունների կողմից, ի գիտություն Խորհրդաժողովի, Գործադիր քարտուղարությանը ներկայացված բոլոր փաստաթղթերի հասանելիություն պատվիրակների համար: Այդ նպատակով Գործադիր քարտուղարությունը պատվիրակների համար կապահովի նման փաստաթղթերի՝ պարբերաբար թարմացվող հավաքածուի հասանելիությունը:

Նրանք այնուհետև պարտավորվում են ապահովել լրատվամիջոցների ներկայացուցիչների համար.

- Խորհրդաժողովի տարածքում, բացառությամբ այն տարածքների, որոնք նախատեսված են պատվիրակությունների և Գործադիր քարտուղարության ծառայությունների համար, ազատ տեղաշարժ: Այդ նպատակով անձը հաստատող վկայական ներկայացվելու դեպքում Գործադիր քարտուղարությունը նրանց կտրամադրի հավատարմագրման քարտեր,
- անարգել շփումներ պատվիրակների և շահագրգիռ հասարակական կազմակերպությունների անդամների հետ,
- Խորհրդաժողովի պաշտոնական փաստաթղթերի հասանելիություն բոլոր աշխատանքային լեզուներով:

Նախագահողն այնուհետև նշում է, որ սույն հայտարարությունը կցվելու է Կոպենհագենի հանդիպման փաստաթղթին՝ որպես հավելված, և հրապարակվելու է դրա հետ միասին: